

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գնդապետ
Ս. Մուրադյան
« 21 » 10 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

**Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝
Նաիրի Արծրունի Սարգսյանի՝ «Ֆինանսական վերահսկողության
իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի
Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02 – Հանրային իրավունք
(սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ,
բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, Գ. Մ. Խուրդյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Լ. Ղազանջյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Մարանդյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Ստեփանյանի, քննարկեց Նաիրի Արծրունի Սարգսյանի՝ «Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Արդյունավետ պետական կառավարում իրականացնելու համար, ի թիվս բազմաթիվ կառավարչական գործընթացների, չափազանց կարևորվում է ֆինանսատնտեսական ոլորտի նկատմամբ իրականացվող պետական վերահսկողությունը: Այս համատեքստում հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում առկա կառավարման ձևը՝ առաջնային դերակատարում է ձեռք

բերում տարբեր մակարդակներում և ձևաչափերով իրականացվող խորհրդարանական վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ, ներառյալ ֆինանսատնտեսականը ոլորտը: Ընդ որում, կարիք է առաջանում հստակեցնելու և պարզաբանելու «վերահսկողություն», «հսկողություն» եզրույթների բովանդակությունը և գործնական տիրույթում դրանց իրացման կառուցակարգերի տարբերությունը: Կարևորվում է նաև ՀՀ-ում տարաբնույթ պետական մարմինների կողմից ֆինանսական բնագավառի վերաբերյալ ոլորտային վերահսկողության, հսկողության, ստուգումների և համանման այլ միջոցառումների առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Սույն հիմնախնդիրներին նվիրված հետազոտության կարևորությունը և ոլորտում առկա որոշ բացերի նախանշումը պայմանավորում են ատենախոսության թեմայի արդիականությունը:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, յոթ ենթագլուխ պարունակող երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական-տեղեկատվական, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձաքննությունը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսական և վերահսկողության հետազոտման մեթոդաբանության հիմնախնդիրները» վերտառությամբ գլխում հեղինակը բացահայտել են վերահսկողության իրականացման իրավական և տնտեսական հիմքերը, ինչպես նաև վերահսկողությունը ուսումնասիրվել է որպես տնտեսության կառավարման գործառույթ: Միևնույն ժամանակ դիտարկման առարկա են դարձել վերահսկողության և հսկողության հայեցակարգերը, դրանց սահմանադրական հիմքերի առանձնահատկությունները:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Ֆինանսական վերահսկողության իրականացման ձևերը և մեթոդները» խորագիրը, լուսաբանված են ֆինանսական վերահսկողության ձևերը և տեսակները, դրանց սահմանազատման մեթոդաբանական առանձնահատկությունները, ինչպես նաև որպես վերահսկողության գործնական դրսևորման արդյունավետության ապահովման միջոց են դիտարկվել ֆինանսական վերահսկողության մեթոդները:

«Ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինները, դրանց կարգավիճակի առանձնահատկությունները» խորագրով երրորդ գլխում հեղինակն ներկայացրել է ֆինանսական վերահսկողության առանձնահատկություններն օրենսդիր մարմնի իրավաստեղծ գործունեության ոլորտում, ինչպես նաև ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող ֆինանսական վերահսկողության առանձնահատկությունները գործադիր իշխանության իրականացման ոլորտում: Քննարկման առարկա են դարձել նաև ՀՀ-ում ֆինանսական վերահսկողության իրականացնող այլ մարմինները և դրանց իրավասությունները:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Ատենախոսության ձևավորումը, կառուցվածքը և ծավալը, հիմնականում, համապատասխանում են սահմանված պահանջներին:

Միաժամանակ, կարծում ենք, որ ատենախոսությունը գերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ նկատառումները ներկայացված են ստորև.

1. Պաշտպանության ներկայացվող 1-ին և 2-րդ դրույթները ձևակերպման մեթոդաբանության տրամաբանական կապի տեսանկյունից վիճահարույց են՝ հաշվի առնելով դրույթների միջև առկա բովանդակային հատումները: Մեր կարծիքով ներկայացված 2-րդ դրույթը կարելի է դիտարկել որպես 1-ին դրույթի ընդլայնված և առավել ընդգրկուն տարբերակ:

2. Պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթը որով առաջարկվող՝ «ընդլայնել բանկերի և Հաշվեքննիչ պալատի լիազորությունները, իրավունք վերապահել լայնորեն կիրառելու և պետությանը հասցված ֆինանսական վնասի վերականգնման գործառույթ» ձևակերպումը առնվազն իրավաբանական առումով վիճահարույց է: Եթե որոշ առումներով Հաշվեքննիչ պալատի սահմանադրաիրավական կարգավիճակից ելնելով դրա լիազորությունների և գործառույթների ծավալի օրենսդրական ընդլայնումը կարելի է համարել իրավաչափ, ապա բանկերին այդպիսի լայն գործառույթներ տրամադրելը մեր կարծիքով հիմնավորված և տրամաբանական չէ: Պետական մարմինների նկատմամբ բանկերի կողմից իրականացվող այս ծավալի վերահսկողական լիազորությունների ընդլայնումը կարող է հանգեցնել պետական կառույցների կառավարչական կարգավիճակի և հեղինակության նվազեցման:

Ինչ վերաբերում է այս դրույթի հաջորդ ձևակերպմանը՝ «Հաշվեքննիչ պալատի համապատասխան պաշտոնատար անձանց իրավունք վերապահել անարգել այցելել պետական մարմիններ, հիմնարկներ, կազմակերպություններ, բանկեր, կնքել դրամարկղերը, պահեստները, իսկ կեղծիքների, յուրացումների, չարաշահումների հայտնաբերման դեպքում առգրավել անհրաժեշտ փաստաթղթերը», ապա այս դեպքում նշված գործողությունների իրականացումը գտնվում է իրավապահ մարմինների իրավասության տիրույթում: Ավելին, նման գործելաճոճը կարող է նպաստել ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության մակարդակի իջեցմանը, տնտեսական գործունեության ազատության սահմանափակմանը և ի վերջո ազգաբնակչության բարեկեցության նվազեցմանը:

3. Պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթում հեղինակի կողմից առաջարկվող հետևյալ գաղափարը՝ «Հիշատակված (Հաշվապահական հաշվառման մասին) օրենքում անհրաժեշտ է սահմանել, որ հարկային իրավախախտումներ թույլ տալու դեպքում գլխավոր հաշվապահը ենթարկվում է պատասխանատվության: Նրա նկատմամբ կիրառվում են որակավորումներից և որոշակի ժամկետով գլխավոր հաշվապահի պաշտոնում աշխատելու իրավունքից զրկելու պատասխանատվության միջոցներ» մեր կարծիքով հիմնավոր չէ: Նշենք, որ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջները խախտելու համար պատասխանատվությունը սահմանված է նշված օրենքի 28-րդ հոդվածով, այն է՝ «Կազմակերպության ղեկավարը և հաշվապահական հաշվառման կազմակերպման ու վարման համար պատասխանատու այլ անձինք հաշվապահական հաշվառումը

կարգավորող իրավական ակտերի պահանջները խախտելու համար պատասխանատվություն են կրում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:»: Ավելին, բլանկետային նորմերի շնորհիվ պատասխանատվության ինստիտուտը վերապահված է այլ օրենսդրական ակտերին, այս պարագայում «որակավորումներից և որոշակի ժամկետով գլխավոր հաշվապահի պաշտոնում աշխատելու իրավունքից զրկելու» իրավասության կարող է բացառապես վերապահվել դատարանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին և 4-րդ ենթակետերին համահունչ:

4. Պաշտպանության ներկայացվող 6-րդ դրույթով հեղինակը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է ներդնել հարկվող շրջանառության հասարակական վերահսկողության համակարգ, հասարակությանը շահագրգռելով առևտրային կազմակերպություններից պահանջել վաճառքների հիմնավորման փաստաթղթերը, հետագայում այդ փաստաթղթերի որոշակի տոկոսի չափով փոխհատուցում ստանալու պայմանով» և պնդում, որ գործընթացը «կհանգեցնի հարկվող շրջանառության ամբողջական հայտարարագրման, ինչն իր հերթին կհանգեցնի հարկային եկամուտների հավաքագրման»: Այս դրույթի հետ կապված հարկ է նշել, որ արդարացված չէ պետության կողմից սեփական պարտավորության իրագործման բեռի փոխանցումը հասարակության ուսերին, առավել ևս, որ վերջնարդյունքի դրական երաշխավորումը կասկածելի է: Ենթադրվում է, որ անձանց տրվելու է իրավունք տնտեսվարողներից պահանջել վաճառքի հիմնավորման փաստաթղթեր: Եվ, սույն իրավունքի պասիվ իրագործման պարագայում հարկային եկամուտների հավաքագրման աճ կարող է չնկատվել:

5. Պաշտպանության ներկայացված եզրակացությունների բաժնի 13-րդ կետի 2-րդ պարբերությունը ամբողջովին կրկնում է պաշտպանության ներկայացված 6-րդ դրույթի բովանդակությունը և ձևակերպումները:

6. Ատենախոսության 56-րդ էջում հեղինակի կողմից ներկայացվում է քննարկվող թեմայի վերաբերյալ հետևյալ ձևակերպումը՝ «Որոշված են հանրապետության նախագահին կից վերահսկողության մարմինների ձևավորման և ստուգումների անցկացման կարգը, սահմանադրությամբ ամրապնդված է ԱԺ և կառավարության լիազորությունները բյուջեյի նախագծի քննարկման, նախորդ տարիների բյուջեների կատարման հաշվետվությունների հաստատման ուղղությամբ», այնինչ «Պետական վերահսկողական ծառայության» մասին օրենքի 3-րդ հոդվածի համաձայն ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը վարչապետին ենթակա մարմին է:

7. Ատենախոսությունը գերծ չէ խմբագրական և ձևավորման պահանջների պահպանման տեսանկյունից որոշ թերություններից, մասնավորապես՝ ա) առանձին դեպքերում առկա են տառասխալներ (օրինակ՝ էջեր 1, 13, 38, 73, 130 և այլն), բ) հղումներում մի քանի հեղինակ նշելիս բացակայում են «Տե՛ս նաև» բառերը (օրինակ՝ էջեր 42-43, և այլն), գ) առկա է միջտողային սահմանների խախտում (օրինակ՝ էջեր 158-159, 169), դ) եզրակացություն բաժնում բացակայում է 7-րդ կետը (օրինակ՝ էջ 168-169), ե) ատենախոսության մեջ «ՀՀ Սահմանադրություն» բառերում «Սահմանադրություն» բառը նշված է փոքրատառով (օրինակ՝ էջեր 33, 45, 91, 93), զ) ատենախոսության մեջ նույն օրենքը նշվում է տարբեր ձևերով (օրինակ՝ «Բանկային

գործունեության մասին օրենք» և «Բանկերի և բանկային գործունեության մասին օրենք» էջեր 132-133), է) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը ներկայացվել է որպես՝ «Վարչական իրավախախտումների մասին» օրենսգիրք (օրինակ՝ էջ 9), ը) ատենախոսության մեջ միաժամանակյա ռեժիմով օգտագործվել են նույն տառի 2 տարբերակներ՝ (օրինակ՝ «և» ու «ե», էջ 95), թ) բազմաթիվ հղումներում աղբյուրը վկայակոչելիս նշված չէ «Տե՛ս» բառը (օրինակ՝ էջեր 28-29, 30-31, 68-69, 70, 72-73 և այլն), և այլն:

Ց. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, ատենախոսության «Մասնագիտական գրականություն» բաժնում ներառված ոչ բոլոր աղբյուրների դեպքում են նշված դրանց էջերի ընդհանուր քանակի վերաբերյալ տվյալները: Բացակայում են էլեկտրոնային ռեսուրսի օգտագործման վերաբերյալ պատշաճ գրառումները: Ավելին, նորմատիվ իրավական ակտերի վկայակոչումը իրականացվել է առանց Հայաստանի Հանրապետության «Պաշտոնական տեղեկագրում» դրանց համար սահմանված պաշտոնական ընդհանուր ձևաչափի: Եվ, վերջապես հեղինակի կողմից օգտագործված գրականությունը ունի առավելապես ռուսական աղբյուրների ծագում և ժամանակագրական առումով վերագրելի է 20-րդ դարին կամ 21-րդ դարի 1-ին տասնամյակին:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ատենախոսությունը իր ամբողջության մեջ և, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Նաիրի Արծրունի Սարգսյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել և հավանության է արժանացել վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի 2022 թ. հոկտեմբերի 21 նիստում, արձանագրություն № 5:

Ամբիոնի պետ, ոստիկանության մայր, իրավաբանական գիտությունների թեկնածու

Գ. Մ. Խուդոյան

Գ. Մ. Խուդոյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ, ոստիկանության գնդապետ

Գ. Գ. Մալխասյան

